# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՈՌԱ ՍՊԸ-ն ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի<br>տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 46 | Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, անկյունները պետք է լինեն կլորացված: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ լաքապատումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, մասնավորապես՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով:Փայտյա, 10 կիսակլոր աստիճաններով, վերին մասը հարմարեցված՝ որպես պտտաձողօգտագործելու համար, բարձրությունը, լայնությունը, կողային հատվածների խորությունը՝ համաձայնեցնել տնօրինության հետ, թույլ լաքապատ: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, |

| | |
|---|---|
| | արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարվի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում) |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГОРА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 46 | |